

2024

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ՝ 144 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱԲ ԴՊՐՈՑ ԵՎ  
40 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Պտղավան բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂՆ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ԳՐԱՖԵԻՆ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ՝ 144 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱԲ ԴՊՐՈՑ ԵՎ 40 ՏԵՂ  
ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ  
ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Պտղավան բնակավայր

---

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԳՐԱՖՇԻՆ» ՍՊԸ տնօրեն՝

Ս. Մուլյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2024

**ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....5

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....5

1.2 Հապավումներ.....5

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....6

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....6

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....9

1.5.1 *Ներկա վիճակի և նախատեսվող գործունեության բնութագիր* .....9

1.5.2 *Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ*.....14

1.5.3 *Իրավիճակային հատակագիծ*.....15

1.5.4 *Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ*.....16

1.5.5 *Ժամանակացույց*.....18

1.5.6 *Ջրամատակարարում և ջրահեռացում*.....19

1.5.7 *Ջեռուցում , հովացում և օդափոխություն* .....20

2. ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ .....23

2.1 Ծինարարության պայմանները.....24

2.2 Ծինարարության ժամկետները.....25

2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....25

2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....26

2.4.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* .....27

2.4.2 *Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը* .....28

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՈՒՄ .....30

3.1 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ.....31

3.2 Աղմուկ և թրթռում:.....31

4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....33

4.1 Կլիմայական պայմանները .....33

4.2 Օդային ավազան.....35

4.3 Ջրային ռեսուրսներ .....36

4.4 Հողածածկ.....38

4.5 Կենսաբազմազանություն.....39

4.6.1 Բուսական աշխարհ .....39

4.6.2 Կենդանական աշխարհ .....42

4.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....43

4.8 Պատմամշակութային հուշարձանների ցանկ.....46

4.9 Բնության հուշարձաններ.....48

4.10 Թափոնների կառավարում .....48

5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	49
5.6	Ռիսկերի գնահատում .....	50
5.7	Արտանետումների աղբյուրները .....	50
5.8	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	50
5.8.1	<i>Մթնոլորտային օդ</i> .....	50
5.8.2	<i>Ջրային ռեսուրսներ</i> .....	51
5.8.3	<i>Հողային ռեսուրսներ</i> .....	51
5.8.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i> .....	52
5.8.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i> .....	53
5.8.6	<i>Աղմուկ և թրթռում</i> .....	53
5.8.7	<i>Թափոնների կառավարում</i> .....	54
5.8.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i> .....	54
5.8.9	<i>Էներգախնայողության միջոցառումներ</i> .....	55
6	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	55
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	56
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	59
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	64
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	65

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ԳՐԱՖԵԻՆ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Շինարարների փող. հ. 5/38
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան բնակավայր, Պողազյան համայնք
Հեռախոս`	+37499994222

## 1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

### **1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը**

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Պտղավան բնակավայրում կառուցել ժամանակակից կրթական համալիր:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Դպրոցի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Պտղավան բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

### **1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Պտղավան բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Մահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2023) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)** - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000)** - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)** - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք**



«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.),

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000թ.)

ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի Ա 781-Ն որոշում

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում

«ՀՀ ջրային օրենսգիրքը» ենդունված 2002 թվականի հունիսի 4-ին, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

## **1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

### **1.5.1 Ներկա վիճակի և նախատեսվող գործունեության բնութագիր**

1. Նախագիծը իրենից ներկայացնում է ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրում 144 տեղ հզորությամբ դպրոցի և 40 տեղ հզորությամբ մանկապարտեզի իրականացման էսքիզ առաջարկ: Նախագիծը իրականացված է ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայնեցված է համապատասխան գերատեսչության որոշում կայացնող աշձատակիցների հետ:

Նախագիծի իրականացնելիս հաշվի են առնվել նաև համայնքի բնակիչների և վարչական ղեկավարների շահերը և առաջարկները բարեկարգման աշխատանքների և այլ

բաղադրիչների վերաբերյալ հաշվի առնելով որ հենց իրենք են լինելու տվյալ նախագծի շահառուները: Դպրոցի շինության նախագիծը իրականացվել է Հայնախագիծ ՓԲԸ կողմից, հաստատվել է որպես տիպային նախագիծ: Տվյալ նախագիծը իրենից ներկայացնում է մոդուլային դպրոցի տեղակայում համայնքի կողմից տրամադրված հողատարածքում, հետագա բարեկարգման և շահագործման համար անհրաժեշտ ինժեներական ենթակառուցվածքների մշակումով:

Հողատարածքի բնութագիր

- Կադաստրային ծածկագիրը՝ 11-055-0002-0001
- Մակերեսի չափը / հա /՝ 1.5
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ Անհատույց օգտագործում

Դպրոցի հողամասի մակերեսը ըստ վկայականի կազմում է 1.5 հա, ըստ կադաստրային քարտեզի 1.68հա: Տվյալ անձշտությունը ենթակա է ուղղման:

Քանի որ դպրոցի հողամասին կից, դեպի հյուսիս առկա է պետական սեփականություն հանդիսացող տարածք 0.4690 հա մակերեսով, ՀՏԶՀ որոշում է կայացրել վերջինս միավորել դպրոցի հողամասին, դրանով հողամասի մակերեսը դարձնելով 2.149հա:

Կառուցապատման ենթակա հողատարածքը մասամբ կառուցապատված է՝ դպրոց՝ 2715.22 քմ, կաթսայատուն՝ 114 քմ, ենթակայան՝ 25.84 քմ: Գոյություն ունեցող շինությունները պահպանվում են:

Տարածքում առկա են ծառաթփային բուսականություն, նոր կրթահամալիրի կառուցման ընթացքում ծառահատումներ չի նախատեսվում:

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 2500մ<sup>3</sup>, բուսահողի հզորությունը կազմում է 0.4-1.2մ, կախված տեղանքից: Շինարարական աշխատանքների ընթացքում այն կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

Կառուցապատման ենթակա հողատարածքը գտնվում է բնակավայրի հարավ – արևելյան հատվածում, ռելիեֆի թեքությունը տատանվում է 3 – 8 տոկոս, հասանելիություն ունի բոլոր ենթակառուցվածքներին /Խմելու և ոռոգման ջուր, բնական գազ, էլեկտրաէներգիա, աղբահանություն/: Հողամասի նպատակային նշանակությունը նույնպես համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության դրույթները նույնպես պահպանված են, հեռավորություն կարմիր գծից, հեռավորություն հարևան հողակտորներից:

Սույն նախագծի նպատակն է դպրոցի տարածքում ստեղծել հարմարավետ և անվտանգ միջավայր՝ հիմնական ֆունկցիոնալ տարածքների բարեկարգման միջոցով: Առաջարկվող միջոցառումներն ուղղված են անվտանգության ապահովմանը, ֆիզիկական ակտիվության պայմանների բարելավմանը, ինչպես նաև բնակչության սակավաշարժ

խմբերի մատչելիությանը: Նախագիծը հաշվի է առնում նաև տարածքում առկա բնական և տեխնիկական սահմանափակումները:

Նախագծով նախատեսվում է դպրոցի շենքի շուրջ հրդեհային երթևեկության կազմակերպում, որն արտակարգ իրավիճակի դեպքում կապահովի հատուկ տրանսպորտային միջոցների ազատ մուտքը: Ճանապարհաձախսը ծածկելու համար կօգտագործվեն հետևյալ նյութերը՝ ասֆալտապատ, բազալտե և բետոնե սալիկներ Այս նյութերի օգտագործումը կապահովի ծածկույթի ամրությունն ու կայունությունը:

Դպրոցի տարածքում նախատեսվում է ստեղծել արհեստական խոտածածկով մարզահրապարակ, ինչպես նաև ռետինե ծածկույթով մանկական խաղահրապարակներ: Նման հարթակը կնպաստի ակտիվ սպորտով զբաղվելուն և կապահովի անվտանգ պայմաններ աշակերտների համար ֆիզիկական կուլտուրայով զբաղվելիս:

Արհեստական խոտածածկը ընտրվում է որպես մարզական դաշտի օպտիմալ նյութ՝ իր ամրության, մաշվածության դիմադրության և խնամքի հեշտության շնորհիվ:

Մուտքը դպրոցի տարածք կկազմակերպվի շրջապատույններով հագեցած մուտքի խմբի միջոցով:

Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներ:

Դպրոցի ծավալա-տարածական լուծումը նախատեսվում է իրականացնել 3 մասնաշենքերից

- 40 տեղ հզորությամբ մանկապարտեզ, որտեղ տեղակայված կլինեն խմբային բջիջները համապատասխան սենքերով /խաղասենյակ, ննջասենյակ, սանահնագույցի, խոհանոց, հանդերձարան և պահոց/

- 144 տեղ հզորությամբ դպրոցի ուսումնական մասնաշենք բաղկացած երկու հարկերից, 1-ին ում տեղակայված կլինեն ուսումնական դասասենյակները, ճաշարանային բլոկը, որտեղ առկա է ուսումնական և հանդերձարանների բլոկը, 2-րդում դասասենյակներ և ադմինիստրացիայի բլոկը:

- Մարզադահլիճ և հանդիսությունների սրահ,

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.7մx18.0մ:

Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը:

Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4մ, որը օգտագործվելու է որպես թաքսոնոց:

Դպրոցի նկուղում /թաքսոնոց/ տեղակայված է ավանդական գրադարան գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրված են համակարգիչներ և պատճենահանման

սարքավորում: Նույն հարկում է գտնվում էլ. կաթսայատունը, սան. հանգույցներ, բուժկետ: Թաքստոց տանող աստիճանը հագեցված է աստիճանային ամբարձիչով հաշմանդամների համար:

Բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունի հարկերը կապող միջհարկային ամբարձիչ հաշմանդամների համար Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսուլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար : Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից երկու խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ:

Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ:

4. Նախագիծը կազմելիս հիմք են ընդունվել հետևյալ նորմերը.

- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ IV-16.01.01-2008 «ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 10-01-2014 «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 30-01-2014 «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 30-02-2022 «ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԻՆԻՍԻ 14-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 13.01-2022 «ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԻՆԻՍԻ 14-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. Գործող կոմունիկացիաների մոտ կատարվող հողային և շինարարական աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել համաձայն բոլոր նորմատիվ պահանջների:

Նոր կառուցվող դպրոցի էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և գազամատակարարման համար կառուցապատողը դիմել համապատասխան լիազոր մարմիններին տեխնիկական պայմաններ ստանալու համար:

## ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ, Մ²	ՔԱՆԱԿ, %
1. ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍ	21527,40	100,00
2. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	2389,90	11,10
3. ՀՈՂԱՄԱՍԻ ԽՈՏԱԾԱԾԿ ՄԱԿԵՐԵՍ	6117,05	28,42
4. ՉՄՇԱԿՎՈՂ ՄԱԿԵՐԵՍ	7600,50	35,31
5. ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐ	2292,85	10,65
6. ՍԱԼՎԱԾՔՆԵՐ	1622,70	7,54
7. ՈՒՏԻՆԵ ԾԱԾԿՈՒՅԹ	1504,40	6,99

ԸՆԴՅԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	4479,9
ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՔ	3580,0
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ	514,0
ՕԺԱՆԴԱԿ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	385,9
ՀՈՂԻ ԿՐԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	2389,90

### ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Ճակատի խրիսխային մասը երեսապատված է բազալտե սալերով:

Նախագծով նախատեսված է ճաատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկույթով:

Մարզասրահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենքի մուտքերը շեշտված են ֆիբրոցեմենտային այլ երանգի սալերով:

Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է:


Արտաքին դռները այլումինե ջերմակամրջակով են՝ ներկված մուգ մոխրագույն գույնով:

Արտաքին պատուհանագոգերը, հովհարը, քիվերը, դռների և պատուհանների շեպերը երեսապատել այլուկաբոնդով: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է 4.0 x 8.0մ ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազբուլի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար


ցանկապատով տարածք :

Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է:

1.5.2 Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ




1.5.3 Իրավիճակային հատակագիծ









**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ**


	Կառուցվող շինություններ
	Ժամանակավոր տեղադրվող մետաղե վահանակային պատ
	Անվտանգ հետիոտն ճանապարհ
	Շին հրապարակ մուտք ելք
	Ավտոմեքենաների շրջադարձի տեղամաս
	Աշխատանքային վտանգավոր գոտու սահմանագիծ
	Ավտոտրանսպորտի լվացման կետ
	Հակահրդեհային վահանակ
	Լուսարձակներ
	Ժամանակավոր տաղավարներ

**ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ**

№ ո/ո	Անվանում	Մակնիշ	Քան.	Ծանոթություն
1	Ավտոկտուն	ԿՇ-65713-1	1	
2	Ինքնաքափ ավտոմոբիլ	MA3 5550	2	
3	Բուլդոզեր KOMATSU	PC 400-7	1	
4	Էլ. եռակցման սարք	ՇԽ 500	1	
5	Շարժական կոմպրեսոր	ՅՈՓ - 55 B	1	ըստ պահանջի
6	Էքսկոպատոր Hyundai	170W-7	1	
7	Աշտարակային կրունկ	Q7Z-80	1	

**ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ**


№ ո/ո	Անվանում	Չափ. Միավ.	Քան.	Ծանոթություն
1	Գրասենյակ	Հատ	1	
2	Հանդերձարան	Հատ	1	
3	Ճաշարան	Հատ	1	Պատրաստի սնունդ
4	Լոգարան	Հատ	1	
5	Հագուստի չորանոց	Հատ	1	
6	Քիմ զուգարան	Հատ	2	
7	Աղբի տարաններ	Հատ	2	
8	Լուսարձակներ	Հատ	16	
9	Հակահրդեհ. վահանակ	Հատ	3	
10	Թափոնների պահոց	Հատ	2	
11	Նյութերի պահեստ	Հատ	2	
12		Հատ	2	



ՆԳՑ	Ա. ԴՈՒԼԻՋԱՆՅԱՆ		ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԿՐԹԱՅԱՄԱՆԻՐԻ ՏԻՊԱՅԻՆ /ՄՈՂՈՒԼԱՅԻՆ/ ՇԵՆՔ, 144 ՏԵՂ	ՊԱՅՈՒՐԱՏՈՒ ԳՂ ՔԱՂԱՍԻՒՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ	Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		ՌՍԵ ԸՆԿԱՆԱԿԱՆ ՑԻՊ ԳՈՐԾՑԵՂ ՔԻՄ 1 ԽՈՂԱՄԱՍ	ՀԱՌՐՈՒԹՅԱՄԲ
			ՇՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	ՓՈՒԼ
				ԹԵՐԹ
				ԹԵՐԹԵՐ
			ՇՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 1:500	Ա.Ն.
				ՇԿ-07
				11
				ԼԻՑԵՆԶԻԱ Գ. 10634 ՔՊԼ 17324
				ԱՐՏՈՆԱԳԻՐ ԾԲԴ - Ա - 0273

1.5.5 Ժամանակացույց

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ԸՆՎԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 24 ԱՄԻԱ

	ԼԳԵ	Ա. ԴՈՒԼԻՋԱՆՅԱՆ		ԱՌ ԿՐԹԱՅԱՄԱՆԻԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԲԱՂՎ. 200 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՍԻՋ. ԴՊՐՈՑԻՑ ԵՎ ԳՐԱԿՈՒՅՑ 40 ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՍԿԱՊԱՐՏԵՁ. ԳՐԱԿՈՒՅՑ ԳՐԱԿՈՒՅՑ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
	ՃԱՐՏԱՐԱՊԵՏ	Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ			ՓՈՒԼ	ԸԿ-05	11
	«ԳԼՈՐԱՆ ԴՐՈՒԿՏ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Լ. ՁԱՏԻԿՅԱՆ			ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ԼԻՑԵՆԶԻԱ Գ. 16634 ԲՊԼ 17324 ԱՐՏՈՒԿՐԻ ՇՐԴ - Ա - 0273		

### 1.5.6 *Ջրամատակարարում և ջրահեռացում.*

Նոր կառուցվող կրթահամալիրի ջրամատակարարումը կիրականացվի հայցվող հողատարածքից 45մ հեռավորության վրա գտնվող ջրագծից, համաձայն տեխնիկական պայմանի /կցված Հավելվածներ բաժնում/:

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը (Նախագծային փուլ) իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են՝

1. ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:
2. ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Տաք ջրամատակարարում:
- Հրդեհամարման համակարգ:
- Կենցաղային կոյուղի:

#### **Ջրամատակարարում**

Նախագծվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից  $2x(1.7x2.3x1.8մ W=7մ^3)$ , որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում Wilo SiBoost Smart 4 HelixVE 404,  $Q=5.0լ/վրկ$ ,  $H=30.0մ$ ,  $N=4x0.75կՎտ$ ,  $3\sim 400 V$ : Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմումեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմումեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

#### **Հրդեհամարման համակարգ**

Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ  $2.5լ/վրկ$  էլքով: Համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված ռեզերվուարներից  $2x(1.7x2.3x1.8մ W=7մ^3)$ , որոնցում առկա է հրդեհամարման անհրաժեշտ ծավալը: Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման  $\varnothing 76x3մմ$  և  $\varnothing 57x3մմ$  տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից: Հրշեջ պահարանները համալրված են հրշեջ ծորակներով և  $l=20.0մ$  երկարության փողրակներով:

#### **Կենցաղային կոյուղի**

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատավծի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանում կոյուղու ճնշումային սարքավորման

օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում: Wilo DrainLift BOX-32/11HD, Q=2.0լ/վրկ, H=6.0մ, N=0.75կՎտ, 1~ 230 V) Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

### 1.5.7 Ջեռուցում, հովացում և օդափոխություն

1. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի շինարարական նորմերի հիման վրա

ա) ՇՆ IV-12.02.01-04 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

բ) ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն"

գ) ՀՀՇՆ II-Պ. 8-71 "Հասարակական սննդի ձեռնարկություն"

դ) ՀՀՇՆ 31-06-2009 "Հասարակական շենքեր և կառույցներ"

ե) ՀՀՇՆ 24.01-2016 "Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների"

#### Ջեռուցում

1.-3.20 հատակագծում ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով :

2. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, երկհարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ:

3. Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ռադիատորներ բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

4. Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

5. Մենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի:

6. Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով :

7. Մանկապարտեզում և դպրոցում մատակարար խողովակը անցնում է ձեղնահարկով, իսկ հետադարձը՝ +0.100 նիշի հատակի միջով: Սպորտ սրահում և հանդիսությունների դահլիճում մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով :

8. Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

9. Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքրում:

10. Համակարգերից ջրի դատարկումը կատարվում է կաթսայատնից:

#### Օդափոխություն

Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով՝

- Մեխանիկական ներածման և արտածման օդափոխություն նախատեսված է նկուղային հարկից (Ն1, Ա1), բուֆետի և քիմիայի կաբինետից (Ն2 Ա2), հանդիսությունների դահլիճի համար (Ն4, Ա4) և մարզադահլիճից (Ն3, Ա3): Մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի համակարգերը աշխատում են պարբերաբար ըստ պահանջի:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման –արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով: Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Որպեսզի աշխատող օդափոխիչներից բացառել աղմուկի տարածումը, ներածման և արտածման օդատարների վրա , օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ:

Քիմիայի կաբինետի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական արտածում (Ա19):

Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է Ն2 ներածման համակարգ:

Դպրոցի -3.30 նիշում օդի ներածումը և արտածումը նախատեսված է իրականացնել մեխանիկական դրդմամբ Ն1 Ա1 համակարգով, որի սարքը տեղադրված է ձեղնահարկում: Մենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշված են համաձայն գործող նորմերի:

Ինքնուրույն արտածման համակարգ մեխանիկական դրդմամբ նախատեսված է սան հանգույցներից կանալային օդափոխիչներով:

Ներածման և արտածման օդատարների բոլոր ճյուղավորումների վրա նախատեսված են օդի կարգավորիչ փականներ ձեռքի կարգավորմամբ:

Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն հճՌԿ 2.08.02.-89\*:

Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում, իսկ հանդիսությունների դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

### **ՋԵՐՄԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ**

1. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի կաթսայատան նախագիծը կատարվել է համաձայն՝

ա) ջերմային ծախսերի: Տես աղյուսակ N1:

բ) ճարտարապետաշինարարական գծագրերի:

գ) կաթսայատան տեղակայման նորմերի (ՇՆ և կ II-35-76):

2. Նախագծվող կաթսայատունը սպասարկում է միայն դպրոցին:

3. Ջերմամատակարարման համակարգը փակ է:

4. Ջերմատարը ջուր՝  $t_1=80^{\circ}\text{C}$ ,  $t_2=65^{\circ}\text{C}$  (հաշվարկային):

5. Կաթսայատան ջրամատակարարումը՝ ջրմուղից:

### **2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

1. Ելնելով ջերմային հաշվարկային ծախսերից նախագծում նախատեսված են երկու ավտոմատացված ջրային էլեկտրոկաթսաներ 120կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը (բոլոր ջերմաստիճանային  $-15^{\circ}\text{C}$ ,  $-20^{\circ}\text{C}$ ,  $-25^{\circ}\text{C}$  ռեժիմների համար):

2. Կաթսայատանը տեղակայված են կաթսաները, թաղանթային ընդարձակիչ անոթը, պոմպերը, կոլեկտորները:

3. Կաթսայատան օդափոխությունը նայել  $-3.20$  նիշի օդափոխության նախագծում:

### **3. ՋԵՐՄԱՄԵԿՈՒՄԱՑՈՒՄ**

1. Ջերմային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով T1, T2, T3 և T4 խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

#### 4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄՈՆՏԱԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են էլեկտրոտեռակցումային ԳՈՍՏ 10704-91 և ջրագազամուղային ԳՈՍՏ 32-62-82 պողպատյա խողովակներով:
2. Բոլոր խողովակաշարերը մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավիկ փորձարկման:
3. Խողովակաշարերը մոնտաժվում են  $I=0,002$ մ/մ թեքությամբ, խողովակաշարերի վերին բարձր կետերից կատարվում է օդի հեռացում, իսկ ներքևի ցածր կետերից՝ ջրի դատարկում:

## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով<sup>ա</sup> բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1 © Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2.Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3.Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

## 2.1 Շինարարության պայմանները

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է · աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,

Բաջնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85\*՝ “Շինարարության տնտղության և նախակատարման · նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում” ,
- ՈՆԻՊ III-4-80\*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝



## Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

## Հիմնական փուլ

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,
- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

### **2.2 Շինարարության ժամկետները**

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս կամ 624 օրացուցային օր, բանվորների առավելագույն քանակը 44 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

### **2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	HOWO	4
2	Էքսկավատոր	KAMAZ	1
3	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
4	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
5	Վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	1
6	Տոփանիչ	CR 3/60	3
7	Գոլքային կաղապարամած	կոմպլ.	3
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	3
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	3
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	6
15	Թրթրագլղոն	НАМІ 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

**2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները**

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է HOWO էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

*Հողային աշխատանքներ՝*

*Հանույթ՝ 29617մ<sup>3</sup>*

*Հետլիցք՝ 4796 մ<sup>3</sup>*

Ավելացած 24821մ<sup>3</sup> հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր /գրութիւնը կցված է Հավելվածներ բաժնում/:

Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

#### **2.4.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

**N**– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 44 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 624 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 44 \times 0.025) \times 624 = 716,3 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.148 \text{ մ}^3/\text{օր:}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 8000 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$$U_1 = 8000 \times 0.0015 \times 300 = 3600 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 12 \text{ մ}^3/\text{օր}$$

**c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>2</sub>** – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 հատ,

**K<sub>2</sub>** – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ<sup>3</sup>,

**T** – ժամանակահատվածը օրերով, 450

$$U_2 = 10 \times 0.14 \times 450 = 630 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.4 \text{ մ}^3/\text{օր}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4946.3 մ<sup>3</sup>/շին. ժամ:**

Բանվորական և ԻՏՍՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիզոուզարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեգում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադբ:

#### **2.4.2 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը**

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

**Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ**

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГООТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով ` համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրերի:
- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը` լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապ` ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:
- Բեռնակալիչ հարմարանքները և տարան ( վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ ` 200 մ<sup>2</sup> մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:
- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

### 3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՀԱՊԱՏՈՒՄ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ռոտզման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների համապատասխան:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ռոտզումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի լիազորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

### 3.1 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ռոռզում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝  $S$  – ռոռզվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝  $S_1 = 6117.05 \text{ մ}^2$ ,

$K$  – ռոռզման օրական հաճախականությունն է,  $K = 2$

$t$  - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է,  $t = 175$  օր

$$W_{u.3} = (0.006 \times 6117.05) \times 2 \times 175 = \underline{12845.8} \text{ մ}^3/\text{տարի}$$

### 3.2 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց

կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:



#### 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պտղավան բնակավայրը գտնվում է Նոյեմբերյան քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք, Դերեղ գետի աջ ափին:

##### Հիդրոերկրաբանական պայմանները

Տարածքում ստորգետնյա ջրերը մինչև է 10,0 մետր խորության վրա բացակայում են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները որոնք կարող են ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա բացակայում են:

##### Տեղանքի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Առանձնացվում են հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտները (ԻԵԷ)՝

ԻԵԷ-1 Հողաբուսական ծածկ, թափվածք, ասֆալտ, հզորությունը 0,4-1,2 մետր է:

ԻԵԷ-2 Ավազակավեր, շականակագույն, գորշ, խոնավ, կիսակոշտ կոնսիստենցիա, բացված հզորությունը հզորությունը 9,0 մետր է: Շերտը համատարած է:

ԻԵԷ-2ա Ավազակավեր, շականակագույն, գորշ, ջրահագեցած, փափուկ-պլաստիկ, հոսուն-պլաստիկ կոնսիստենցիա, բացված հզորությունը հզորությունը 5,0 մետր է: Շերտը բացված է հորատանցք-5-ում: Նման կոնսիստենցիան պայմանավորված է կոմունիկացիոն ջրերի առկայությամբ, խողովակների վնասվածքներով:

Սեյսմիկա ՀՀՇՆ 20.04-2020 համաձայն Նոյեմբերյան քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում ( $a=0,3g$ ), տեղամասի գրունտային պայմաններն, ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում են որպես 3-րդ կարգ, որին համապատասխանում է 0,3g ( $K_0=1,1$ ) գրունտի հորիզոնական արագացման արժեքը՝

$$a_{max}=0.33g$$

##### 4.1 Կլիմայական պայմանները

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները ըստ Հ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի տարածքի համար բնութագրական են հետևյալ կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք» կլիմայական շրջանում: Բնորոշ է տաք ամառը՝ հուլիսի օգոստոսի միջին ամսական ջերմաստիճանը  $23,1^{\circ}\text{C}$ - $22,6^{\circ}\text{C}$  է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 76% (ժ.15-ին): Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -

0.3°C է: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Բագրատաշենի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճան, °C

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավել լագուն, °C
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Բագրատաշեն	451	-0.3	1.7	5.6	11.6	16.5	20.1	23.1	22.6	18.3	12.4	6.7	2.2	11.8	-21	42


Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին
	ըստ ամիսների												ամենացուրտ ամսվա %	ամենաչոք ամսվա, %		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Բագրատաշեն	<b>78</b>	<b>77</b>	<b>74</b>	<b>73</b>	<b>77</b>	<b>74</b>	<b>71</b>	<b>72</b>	<b>77</b>	<b>81</b>	<b>82</b>	<b>80</b>	<b>76</b>	<b>78</b>	<b>65</b>	

Տվյալ կլիմայական գոտուն բնորոշ քամու միջին արագությունը 2.0-3.0 մ/վ է:

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթ

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ		
	ըստ ամիսների											Տարեկան	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI				XII
Բագրատաշեն	22	26	41	52	76	76	46	34	35	38	34	20	500	13	70
	18	30	29	36	56	84	82	55	39	39	42	23			



## Կլիմայական շրջանցման սխեմատիկ քարտեզ

### 4.2 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Պտղավան բնակավայրում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ<sup>3</sup>;

- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ<sup>3</sup>:

### 4.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Ուսումնասիրվող տարածքը պատկանում է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքին:

Հյուսիսային ՋԿՏ-ը ներառում է Դեբեդի և Աղստևի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ- կենցաղային և հանքարդյունաբերական կեղտաջրերը: 2022 թվականին Հյուսիսային ՋԿՏ- ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 22 դիտակետում, որոնցից 14%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 50%-ում՝ 3-րդ դաս, 22%-ում՝ 4-րդ դաս և 14%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի փոփոխություն է նկատվել Փամբակ գետի՝ Խնկոյան գյուղից վերև դիտակետում, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Փամբակ գետի՝ Սպիտակ քաղաքից ներքև դիտակետում, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս, Դեբեդ գետի՝ Մարց գետի թափման կետից ներքև դիտակետում, որտեղ ջրի որակը 5-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Տաշիր գետի՝ Մարատովկա գյուղից ներքև դիտակետում, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս, Գարգառ գետի՝ գետաբերանի դիտակետում, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Աղստև գետի՝ Իջևան քաղաքից վերև դիտակետում, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս և Գետիկ գետի՝ Վահան գյուղից վերև դիտակետում, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Այստեղ աղտոտված գետերից են Փամբակը, Դեբեդը, Ախթալան, Շնողը: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 2 դիտակետում, որից մեկում՝ նաև որակի մոնիթորինգ: 2021 թվականին այս ջրավազանից ջրօգտագործումը կազմել է 22. 86 մլն մ<sup>3</sup>, որից 54.6%-ը բաժին է ընկնում մակերևութային, 45.4%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (38%), խմելու (35%) և արտադրական (27%) և այլ նպատակներով:

#### Մակերևութային ջրեր

##### Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Հինգ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 19-ում.

**Աղյուսակ 19. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.**

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան էլքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	2.97	5.93	50.1
Դեբեդ	Այրում	28.6	33.5	85.4
Չորագետ	Գարգառ	14.1	15.4	91.6
Աղստև	Իջևան	7.24	9.83	73.7
Գետիկ	Գոշ	2.45	3.56	68.8

Մակերևութային ջրերի որակ

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, Վանաձոր քաղաքից վերև՝ նիտրատ իոնով, ընդհանուր լուծված աղերով և կախության չոր նյութերով: Սպիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով: Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և կախության չոր նյութերով: Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով, սահմանի մոտ՝ մոլիբդենով և կախության չոր նյութերով:

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ստեփանավան քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով և կախության չոր նյութերով:

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով: Մարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, անագով, սուլֆատ իոնով և կախության չոր նյութերով:

Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և սուլֆատ իոնով:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախության չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև

նիտրիտ իոնով, Իջևան քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով, երկաթով, բարիումով և կախութային չոր նյութերով, Իջևան քաղաքից ներքև՝ ամոնիում և նիտրիտ իոններով, երկաթով, բարիումով, ընդհանուր ֆոսֆորով և կախութային չոր նյութերով:

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վահան գյուղից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով և կախութային չոր նյութերով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և բարիումով:

#### Ստորերկրյա ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ իրականացվել է 2 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը, ջրի որակի մոնիթորինգ իրականացվել է 1 դիտակետում: Ծախսերի ցածր արժեքներ 2022 թվականին նկատվել են դեկտեմբեր, իսկ բարձրը՝ հունիս ամիսներին: Ծախսերը տատանվել են 0.48-0.72 լ/վ (N 2058) և 0.06-0.17 լ/վ (N 2059) սահմաններում: Ջրերի ջերմաստիճանները տատանվել են 11-13.1°C և 10.4-11.2°C սահմաններում:

Հյուսիսային ՋԿՏ-ի 1 դիտակետում 2022 թվականի մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ: N2058 դիտակետում հանքայնացումը կազմել է 0.57 գ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան տատանվել է 21.1-27.8 մգ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 28.8-31.1 մգ/լ, քլորիդ իոնի կոնցենտրացիան՝ 7.4-10.1 մգ/լ, պղնձի կոնցենտրացիան՝ 0.0005-0.002 մգ/լ, արսենի կոնցենտրացիան՝ 0.002-0.003 մգ/լ, կապարի կոնցենտրացիան՝ 0.0001-0.0005 մգ/լ սահմաններում: Նշված ցուցանիշների կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

#### **4.4 Հողածածկ**

Համաձայն ՀՀ հողերի ծածկույթի քարտեզի ծրագրի տարածքը գտնվում է կիսա - անապատային գոտու սահմաններում, որտեղ տարածված են լեռնա - անտառային դարչնագույն հողատեսակներ: Անտառային դարչնագույն հողերի տիպը կազմում են Հայաստանի հողային ֆոնդի 21.6% - ը: Տարածված են Լալվար-Լեջանի, Գուգարքի, Բագումի, Իջևանի, Նոյեմբերյանի տարածաշրջանում, Զանգեզուրում և Արագածի արևելյան լանջերին: Լեռնա-անտառային գոտու դարչնագույն հողերը տարածված են 700-1500մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոստրակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Անտառների ոչնչացման հետ կապված այս հողերի զգալի մասն օգտագործվում է որպես վարելահող հացահատիկների, պտուղ-բանջարեղենի մշակման նպատակներով կամ որպես խոտհարք:

Հումիսային նյութերում հումիսաթթուների և ֆուլվոթուների քանակը գրեթե հավասար է: Այս տիպի հողերն ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով: Աաղյուսակում ներկայացվում է դարչնագույն անտառային հողերի ֆիզիկաքիմիական հատկությունները (աղ.8):

Նոյեմբերյանի տարածաշրջանում հիմնականում անտառային դարչնագույն տիպի մնացորդային կարբոնատային տափաստանացված, կավ-ավազային, ավազակավային և կավա-կարբոնատային ենթատիպերով հողեր են: Հիմնականում տարածված են թեթև և միջակ կավավազային մեխանիկական կազմ ունեցող տեսակները: Շրջանի երկրաբանական և լիթոլոգիական կտրվածքի վերին մասը ներկայացված է էյուվիալ, այուրիվիլ, դեյուվիալ և պրովիվիալ նստվածքներով, որոնք ծածկում են կրաքարերի, ավազային և կավային կրաքարերի, մերգելների, ցեոլիտացված և բենտոնիտացված անդեզիտային պոֆիրիտների, տուֆերի և տուֆափշրաքարերի հաստվածքները:

#### 4.5 Կենսաբազմազանություն

Այս բաժնում ներկայացվող նյութը կազմված է շրջանի կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ հասանաելի գիտական հրապարակումների, ինչպես նաև դաշտային այցելությունների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

##### 4.6.1 Բուսական աշխարհ

Հայցվող տեղամասը ամբողջությամբ մտնում է Իջևանի ֆլորիստական շրջանի մեջ, որտեղ հիմնական բուսական տիպը անտառայինն է: Անհամեմատ փոքր տարածքներ են զբաղեցնում չոր, նոսր անտառները և ենթալպյան համակեցությունները:

Անտառ կազմող գլխավոր ծառատեսակներն են արևելյան հաճարենին, արևելյան և վրացական կաղնին, բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են դաժին, լորին, հացին, սրատերև և դաշտային թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր փոքր ծառուտներ:

Ցածր լեռնային գոտում (մինչև 1000մ) անտառային բուսականությունը ներկայացված է դաժու շիվային ծագման ծառուտներով, իսկ անտառի կազմում զգալի մասնակցություն ունեն վրացական կաղնին, սրապտուղ և սովորական հացին, վրացական և դաշտային թխկին և տերևաշատ թեղին:

Թփերից հանդիպում են հոնին, սզնին (նկ.12), մասրենին, զկռենին (նկ.13), մոշենին և այլն:

Ղաժու համակեցություններն ըստ էության ածանցյալ են, ունեն երկրորդական ծագում և փոխարինել են անցյալում հատված կաղնու անտառներին:

Հարավային լեռնալանջերում հանդիպում են գիհու նոսր անտառներ, որտեղ գիհու հետ միասին աճում են փռչնի, դժնիկ և այլ չորադիմացկուն տեսակներ: Այստեղ 700 մ-ից մինչև 1400մ բարձրություններում փոքր խմբերով կամ առանձին ծառերի ձևով աճում է ընկուզենի:

Հանքավայրի շրջանի բուսածածկը հիմնականում ներկայացված է անտառային լայնատերև և քսերոֆիլ նոսրանտառային բուսականությամբ, սահմանափակ տարածում ունի բուսականության ենթաալպյան մարգագետնային տիպը (նկ. 14):

Հանդիպում են Բանգի սև (*Hyoscyamus niger*), Եղինջ երկտուն (*Utrica dioica*), Երեքնուկ կարմիր, Երեքնուկ սողացող (*Trifolium hybridum*, *Trifolium repens*), Իշաովույտ դեղատու (*Melilotus officinalis*), Խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis*), Ծտապաշար սովորական (*Capsella bursa pastoris*):

Վայրի օգտակար բուսատեսակներից տեղանքում հանդիպում է Խնկածաղիկ սովորականը (*Origanum vulgare*):



Նկ.12: Սզնի



Նկ. 13: Զկռենի



Նկար 14: ՀՀ Տավուշի մարզի բնական բուսածածկի տիպերի սխեմատիկ քարտեզ: 1-քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն - սաղարթավոր խառը, մասնակցությամբ *Paliurus spinachristi* Mill., *Spiraea crenata* L., *Amugdalus fenzliana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall., 2- Անտառային բուսականություն – Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky), կաղնու (*Quercus iberica* Stev. *Q.macranthera* Fisch.et Mey.ex Hohen), բոխու (*Carpinus betuius* L., *C. orientalis* Mill), հաղենու (*Fraxinus excelsior* L.), լոռենու (*Tilia begoniifolia* Stev.)[33]:

Շիբլյակը (նկ. 15) տարածված է ստորին լեռնային գոտում, զբաղեցնում է տարածքի մեծ մասը, որտեղ Էդիֆիկատոր է հանդիսանում Ցաքին (*Paliurus spina Christi* Mill): Ցաքու հետ



հանդիպում են նաև այլ թփեր՝ Ցախակեռասը կովկասյան (*Lonicera caucasica* Pall.), Դժնիկը Պալասի (*Rhamnus pallasii* Fish., et Mey.), Ասպիրակը աղեղնաեզր (*Spiraea crenata* L.), Հասմիկը թփուտային (*Jasminum fruticans* L.), Էֆեդրան լեռնային (Սարի չամիչ)(*Ephedra procera*):

Խոտածածկը բազմազան է, հանդիպում են Ողկուզակ կովկասյան (*Dictamnus albus* L subsp. *caucasicus* (Fisch. Et C. A. Mey.), Մակարդախոտը (նկ.16, *Galium verum* L.,) Կաթնախոտը անատոլիական (*Polygala anatolica*), Լերդախոտը ալեհեր (*Teucrium polium* L. ), Հազարատերևուկը սովորական (*Alchemilla millefolium* L.), Ավելուկ սովորականը (*Rumex acetosa* L.), Թխակակաչ եղջրավորը (*Glaucium corniculatum* (L.) Curt.) և այլն:



Նկ.15: Ծիրբյակ:



Նկ.156 Մակարդախոտ

**Փետրախոտա-տարախոտային** տափաստանի հատվածում հանդիպում են Փրփրուկ տափաստանայինը (*Filipendula hexapetalaa* Gilib.), Պնակախոտ արևելյանը (*Scutellaria orientalis* L. ), Քարառվույտ երփներանգը (*Coronilla varia*), Քոսքոսուկը (*Scabiosa*), Գազը (*Astragalus* sp. ), Բավեղը պալարավոր (*Phlomis toberosa* L.), Բավեղը փշոտ (*Phlomis pungens* Willd.), Սիրեխ սովորականը (*Falcaria vulgaris* Bernh.), Անմոռուկ դաշտայինը (*Myosotis arvensis* (L.) Hill.), Երեքնուկ վարելահողայինը (*Trifolium arvense* L.) և այլն:

**Հացահատիկա-տարախոտային** հատվածում գերիշխում է Ցորնուկը (*Bromus*): Հանդիպում են նաև Ուրցը կոչիի, (*Thymus kotchianus*), Ուրցադաղձը ռեհանաուրցանման (*Ziziphota clinopodioides*), Ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), *Poa nemoralis* (Դաշտավլուկ կաղնութային), Երեքնուկ սողացող (*Trifolium repens* L.), Առվույտ ցանովի (*Medicago sativa*), Դաշտավլուկ կաղնուտային (*Poa nemoralis*), Մարգարտախոտ միածաղիկը (*Melica uniflora* Retz.), Ցորնուկ ճապոնականը (*Bromus japonicus*), Հազարատերևուկ սովորականը (*Achillea millefolium*), Պատաստուկ դաշտայինը (*Convolvulus arvensis*):

**Չորակներում** մնացորդային լայնատերև նոսրանտառի կղզյակներ են, մասնակցությամբ՝ մապենու (*Rosa canina*), Հացենու սովորական (*Fraxinus excelsior*), Գերիմաստու (*Viburnum lantana*), Ասպիրակի աղեղնաեզր (*Spiraea crenata* L.), Պիստակենու (*Pistacea mutica*), Ճապկիի հարավի (*Swida australis*) և այլն:

Հայցվող տարածքում, որտեղ իրականացվելու են հետախուզական աշխատանքներ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվում է արդեն իսկ կառուցապատված միջավայրում, բնապահպանական միջոցառումների չի նախատեսվում իրականացնել:

#### 4.6.2 Կենդանական աշխարհ

Շրջանի կենդանական աշխարհը ներկայացված է Կովկասյան լայնատերև անտառներին բնորոշ տեսակներով: Այս գոտում գրանցված են երկկենցաղների 1, սողունների 4, թռչունների 84 և կաթնասունների 24 տեսակներ: Հանդիպում են այծյամներ, գորշ արջ, վայրի խոզ, գայլ, աղվես, փորսուղ, նապաստակ, կզաքիս, չախկալ, ոզնի, սկյուռ, անտառային կատու, դաշտամուկ, սողունների, երկկենցաղների, թռչունների, միջատների և բզեզների տեսակներ, իսկ ձկներից բնորոշ են կարմրախայտ, մուրձի, բեղլու և այլ տեսակներ (Դեբեդ և Կուր գետերում):

Գրականության և դաշտային այցելությունների ընթացքում հավաքված տվյալների հիման վրա ստորև ներկայացվում է շրջանում հանդիպող կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցանկը:

##### Կաթնասուններ

1. Գայլ-*Canis lupus*:
2. Շնագայլ –*Canis aureus*:
3. Աղվես – *Vulpes vulpes*:
4. Կզաքիս –*Martes foina*:
5. Նապաստակ - *Lepus europaeus*: Պարբերաբար գրանցվել է շահագործման ենթակա և հարակից տարածքներում:
6. Սովորական դաշտամուկ – *Microtus arvalis*:
7. Անտառային մուկ –*Apodemus sylvaticus*:
8. Թփուտային դաշտամուկ – *Microtus majori*:

##### Թռչուններ-Aves

1. Մեծ ճուռակ- *Buteo buteo*:
2. Տափաստյին ճուռակ- *buteo rufus*
3. Լորաճուռակ -*Accipiter nisus* :
4. Սովորական հողմավար բազե- *Falco naumanni* :
5. Անտառային աղավնի – *Columba palumbus*:
6. Սովորական կկու-*Coculus canorus*:
7. Այծկիթ –*Caprimulgus europaeus*:
8. Ոսկեգույն մեղվակեր – *Merops apiaster*:
9. Հոպոպ –*Upopa eops*:
10. Խայտաբղետ փայտփոր – *Dendrocopos medius*:
11. Անտառային արտույտ – *Lullula arborea*:
12. Գյուղական ծիծեռնակ- *Hirunda rustica*:
13. Քաղաքային ծիծեռնակ –*Delichea urbica*:
14. Սպիտակ խաղտոնիկ – *Motacilla alba*:
15. Մարգագետնային ձիաթռչնակ – *Anthus pratensis*:
16. Ժուլան –*Lamius colluria*:
17. Արշալուսիկ –*Erithacus rubecula*:
18. Սովորական կարմրատուտ –*Phoenicurus phoenicurus*:
19. Մարգագետնային չքքան –*Saxicola rubetra*:
20. Սև կեննեխ –*Turdus merula*:
21. Ծնկլտան գեղեցիկ-*Phylloscopus collybita*:
22. Մեծ երաժշտահավ –*Parus major*:

23. Լեռնային դրախտապան-*Emberiza cia*:
24. Սևագլուխ դրախտապան-*Emberiza melanociphola*:
25. Ամուրիկ – *Fringilla coelebs*:
26. Կանաչ սերինոս –*Carduelis chloris*:
27. Կարմրակատար –*Carduelis carduelis*:
28. Սովորական կաչաղակ –*Pica pica*:

Սողուններ/Reptilia/ և երկկենցաղներ /Amphibia/

1. Ագամա-*Agama caucasica*:
2. Շերտավոր մողես-*Lacerta strigata*:
3. Պղնձօձ-*Coronella austriaca*:
4. Ժայռային մողես-*Darevskia raddei*
5. Կանաչ դողոշ-*Bifo viridis*:

Կառուցապատման ենթակա տարածքում ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվում է արդեն իսկ կառուցապատված միջավայրում, բնապահպանական միջոցառումների չի նախատեսվում իրականացնել:

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշումների՝ Լոռու (Սարչապատ գյուղի շրջակայք) և Իջևանի (Բագրատաշեն, Քոբայր, Այրում, Ախթալա, Դեբեդ գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում հանդիպում է Խոնդատ մուգ մանուշակագույն *Verbascum\_atroviolaceum\_(Sommier et Levier) Murb.* վտանգված բուսատեսակը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 400-1400 մ բարձրությունների վրա. տափաստանացած լանջերին, շիբլակում: Իջևանի (Բագրատաշենի շրջակայք) և Մեղրու (Ագարակի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում հանդիպում է Գնկոր նրբագեղ (*Aira\_elegantissima Schur*) վտանգված բուսատեսակը: Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 400-1000մ բարձրությունների վրա. ավազոտ տեղերում, քարքարոտ լանջերին, շիբլակում և նոսրանտառներում: Տավուշի մարզից (Բագրատաշեն գ. շրջակայք) հայտնի է Սղոցապոչ անդրկովկասյան (*Poecilimon geoktschaicus Stshelkanovtsev*) վտանգված կենդանատեսակը:

#### **4.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ**


Համաձայն ՀՀ տարածքի հատուկ պահպանվող տարածքների քարտեզների (նկ.18, 19) Հանքավայրին ամենամոտ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքը «Զիկատար» պետական արգելավայրն է:

Զիկատար արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք է, ՀՀ 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 2010 թվականի ապրիլի 8-ին՝ ՀՀ կառավարության N 380-Ն որոշմամբ: «Զիկատար» պետական արգելավայրը կառավարության 2020թ. Մարտի 19-ի N334-Ն որոշմամբ հանձնվել է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ին:

Ունի 150 հա տարածք, գտնվում է ՀՀ Տավուշի մարզի, Գուգարաց լեռնաշղթայի Զիզկատար լեռնագագաթի հյուսիսարևելյան լանջերին՝ ծովի մակարդակից 1250-1650 մ բարձրության վրա, ստեղծվել է անտառային բնական էկոհամակարգերի պահպանության նպատակով (նկ.20):

«Զիկատար անտառային գիտափորձարարական կենտրոն» -ը ստեղծվել է 2002թ.-ին: Ուսումնասիրվող տարածաշրջանը Հայաստանի բուսական կենսաբազմազանության հարուստ օջախներից է, ընդ որում անտառային կենսաբազմազանության կազմում առաջատար դեր են կատարում ծառերն ու թփերը, որոնք բնակատեղի են հանդիսանում հազվագյուտ և անհետացող այնպիսի կենդանական տեսակների համար, ինչպիսիք են կովկասյան գորշ արջը, կովկասյան ջրասամույրը (*Lutra lutra meridionalis*), կասպիական հնդկահավը (*Tetraogallus caspius*), կովկասյան մայրեհավը (*Tetrao miokosiewiczzi*):


## ՀՀ հատուկ պահպանվող տարածքները



Նկ.18: ՀՀ հատուկ պահպանվող տարածքների քարտեզ, [37]:


«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱ կազմակերպությունում էկոզոոսաշրջության զարգացման և համապատասխան ծառայությունների մատուցման հնարավորությունները պայմանավորված են՝ 1.«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության կառավարման տակ է«Զիկատար» պետական արգելավայրը 150 հեկտար շատ լավ պահպանված անտառներով, որոնք առանձնանում են

կենսաբազմազանության բարձր պոտենցիալով, էնդեմ և ռելիկտային բուսատեսակներով Արգելավայրի տարածքում է գտնվում բնապահպանական ուսումնական կետեր՝ ապահովված ուսուցումների, կեցության և հանգստի կազմակերպման համապատասխան պայմաններով:



Նկ.19: ՀՀ Բնական հուշարձանների, արգելավայրերի, արգելոցների քարտեզ [37]:

Պարբերաբար կազմակերպվում են ամառային և աշնանային ուսումնական ճամբարներ: Հայաստանի ու Վրաստանի տարբեր ուսումնական հաստատությունների ուսանողների և աշակերտների համար, մասնավորապես երկար տարիներ իրենց ամառային ճամբարն են Զիկատարում կազմակերպում Միխիթար Մեբաստացի կրթահամալիրի սաները([www.zikatar.am](http://www.zikatar.am)):



Նկ.20: Զիկատարի իրավիճակային քարտեզ հատակագիծը:

#### 4.8 Պատմամշակույթային հուշարձանների ցանկ

Այս հոդվածը ներկայացնում է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 12 հուշարձան (11 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.
Եկեղեցի «Ջուխտակեղցի»	13-14 դդ.	քաղաքից 18 կմ հվ-ամ, սարի վրա	—	<a href="#">10.4/3</a>	Հ
Խաչքար	13-14 դդ.	Կողբ տանող ճանապարհի եզրին	—	<a href="#">10.4/4</a>	Հ
Խաչքար	15-16 դդ.	քաղաքի հվ-ամ բարձունքին, ջրամբարի մոտ	—	<a href="#">10.4/5</a>	S
Խաչքար	16-17 դդ.	քաղաքի հվ-ամ բարձունքին,	—	<a href="#">10.4/6</a>	S

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.
		ջրամբարի մոտ			
Հուշաղբյուր	1931 թ.	քաղաքի աե եզրին, ձորի մեջ	—	<a href="#">10.4/7</a>	S
Հուշաղբյուր Հայաստանի խորհրդայնացման 45 ամյակին	1965 թ.	քաղաքի մեջ	—	<a href="#">10.4/9</a>	Հ
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1970 թ.	Նոյեմբերյան - Իջևան ճանապարհի աջ կողմում, քաղաքից 1 կմ հվ-աե	—	<a href="#">10.4/8</a>	S
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1980 թ.	քաղաքի հվ մասում	—	<a href="#">10.4/10</a>	Հ
Ամրոց	մ.թ.ա. 2-1 հզ	քաղաքի հս եզրին, «Թբի Ղաշ» վայրում	—	<a href="#">10.4/1</a>	Հ
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ		—	<a href="#">10.4/1.1</a>	Հ
Ամրոց «Բերդատեղ»	մ.թ.ա. 2-1 հզ	քաղաքից 2 կմ հս-աե, Ժայռոտ բարձունքին	—	<a href="#">10.4/2</a>	Հ
Մատուռ	վերակառ. 20 դ. սկզբին	քաղաքից 10 կմ ամ	—	<a href="#">10.4/11</a>	Հ

Տավուշի մարզի Պտղավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 2 հուշարձան (2 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.
Դամբարանաբլուր	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 2 կմ աե, Այրու- Բագրատաշեն ճանապարհի աջակողմյան բարձունքին	—	<a href="#">10.55/1</a>	Հ
Սրբատեղի «Խեչ»	19-20 դդ.	գյուղից 2 կմ աե, դամբանաբլրից 300 մ հվ	—	<a href="#">10.55/2</a>	Տ

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, շինարարական աշխատանքների ընթացում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կդադարեցնեն աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնեն լիազորված մարմնին»:

#### 4.9 Բնության հուշարձաններ

ՀՀ Տավուշի մարզի բնության հուշարձանների ցանկ՝

1. «Մոլլաքար» ժայռ	Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում
2. «Անանուն» պլազիոգրանիտներ	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ
3. «Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին
4. «Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր	Տավուշի մարզ, Վարազաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ
5. «Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ
6. «Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ
7. «Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի ձախ վտակի հովտում
8. «Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
9. «Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտներ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին
10. «Անանուն» շերտագրական մերկացում	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
11. «Անանուն» սանդղափուլ քարափներ	Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ
12. «Օձաքար» լեռնագագաթ	Տավուշի մարզ, Պատավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում

#### 4.10 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝



	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ, ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած	IV	9120060101004	200 մ <sup>3</sup>
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	120մ <sup>3</sup>
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	24821մ <sup>3</sup>

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Դպրոցի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

**5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախտանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

## **5.6 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

## **5.7 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

## **5.8 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

### **5.8.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ.

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.

5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:

### **5.8.2 Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը:

### **5.8.3 Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
  - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
  - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
  - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
  - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
  - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
  - Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

#### **5.8.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### **5.8.5 Հակահրդեհային միջոցառումներ**

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

### **5.8.6 Աղմուկ և թրթռում**

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրուումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից ադմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց ադմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

### ***5.8.7 Թափոնների կառավարում***

Միջնակարգ դպրոցի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Միջնակարգ դպրոցի կառուցման ընթացքում աստիճանաբար շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

### ***5.8.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում***

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների համապատասխան:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

### **5.8.9 Էներգախնայողության միջոցառումներ**

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելիության փոքր տոկոս ունեցող պատուհաններ
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում
- Տաք ջրի պատրաստման համար նախատեսված արևային ճնշումային ջրատաքացուցիչների կիրառում

## **6 ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ**

Միջնակարգ դպրոցիի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(f) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.</p> <p>(g) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ.</p> <p>(h) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.</p> <p>(i) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենատեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.</p> <p>(j) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.</p> <p>(k) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.</p> <p>(l) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:</p> <p>(m) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:</p> <p>(n) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:</p>



	Աղմուկ և թոթոռուն	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> <p>(c) Աշխատատեղերում աղմուկի և թոթոռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>(d) Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>(e) Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>(f) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>(g) Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>
	Թափոնների կառավարում	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններց, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն</p> <p>(b) տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p> <p>(c) ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,</p> <p>(d) անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակում, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p>

<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(e) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <p>(f) պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</p> <p>(g) Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</p> <p>(h) Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</p> <p>(i) Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</p> <p>(j) Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում</p>
<p>Տարածքի բարեկարգում/ կանաչապատում</p>		<p>(k) կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>(l) ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p>
<p>Թափոնների կառավարում</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<p>(m) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(n) շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(o) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(p) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(q) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել</p> <p>(r) Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով</p> <p>(s) վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը</p> <p>(t) Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>(u) Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը</p> <p>(v) հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</p>

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Օդի որակի հսկում	<ul style="list-style-type: none"> <li>- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.</li> <li>- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ.</li> <li>- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.</li> <li>- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.</li> </ul> <p>Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն</p>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն

	<p>հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.</li> <li>- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.</li> <li>- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:</li> <li>- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:</li> <li>- շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի</li> </ul>				
--	---	--	--	--	--

	տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:				
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Աղմուկի մակարդակի հսկում	<ul style="list-style-type: none"> <li>- Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</li> <li>- Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</li> <li>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</li> <li>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</li> <li>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում, աղմուկի մակարդակի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն

	<ul style="list-style-type: none"> <li>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</li> <li>- Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</li> </ul>				
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Մասնագիտացված ընկերություն	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	<ul style="list-style-type: none"> <li>- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում</li> <li>- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ</li> </ul>	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	<ul style="list-style-type: none"> <li>- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով</li> <li>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն</li> </ul>	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

Տարածքի Կանաչապատում, բարեկարգում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում	Շինարարության Ավարտին	Կապալառու
Վտանգավոր նյու- թերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

## ՕԳՏԱԳՈՂՕՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:



## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք  
(մարզը, համայնքը)  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 441 « 05 » օգոստոսի 2024թ.

Օրյեկտ՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի նոր կրթահամալիրի կառուցում  
բաղկացած 200 աշակերտի համար միջնակարգ դպրոցից և 40 երեխայի համար մանակապարտեզից:

(օրյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն) (հակիրճ բնորոշումը, հզորությունը

քարձր ռիսկայնության աստիճանի, IV-րդ կատեգորիա՝ նախագծային փաստաթղթերի մշակման համար:  
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը՝ ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնքի գյուղ Պտղավան, կադաստրային ծածկագիր՝ 11-055-0002-0001

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ), ք. Երևան Կ.Ուլենցու 31, հեռ. 060501560, atdf@atdf.am

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ կառուցապատողի հայտ, սեփականության վկայական՝ 05122017-11-0018

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը՝ 24 ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է Նոյեմբերյան համայնքի Պտղավան բնակավայրի վարչական սահմաններում, հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասում  
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (\*) Հողամասի չափերը 1.5 հա  
(հողամասի սահմանները՝ կողոփնատային նշահարմար, մակերեսը (հա)
3. Հողամասի առկա վիճակը մասամբ կառուցապատված տարածք, դպրոց՝ 2715,22 քմ, կաթսայատուն՝ 114քմ և ենթակայան՝ 25.84 քմ  
(ոնիեֆի ընթացիկը, շենքերի (այդ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, քարեկարգումը և այլն)
4. (\*) Տրանսպորտային պայմանները ներհամայնքային ճանապարհ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտեցումները և այլն)

5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման համակարգերը կից սխեմայով

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (\*) Կից հողամասեր

մասնավոր և համայնքային հողեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

բնության հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձանների տարածքների կամ պահպանման գոտիները չկան  
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (\*) Հատակագծային սահմանափակումներ

Սահմանափակումներ չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Համաձայն գործող նորմերի

(եթևելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, սույն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ

դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

մոտ 40 մ

9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Գործող նորմերին համապատասխան

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

Գործող նորմերին համապատասխան

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

\_\_\_\_\_ **Գործող նորմերին համապատասխան**

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

\_\_\_\_\_ **Գործող նորմերին համապատասխան**

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

\_\_\_\_\_ **Գործող նորմերին համապատասխան**

9.7. այլ պահանջներ

\_\_\_\_\_

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

**Ըստ անհրաժեշտության ապամոնտաժել դպրոցն և կաթսայատունը**

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (\*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

\_\_\_\_\_ **ըստ տեխնիկական պայմանների**  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (\*) էլեկտրամատակարարում

\_\_\_\_\_ **ըստ տեխնիկական պայմանների**  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (\*) գազամատակարարում

\_\_\_\_\_ **ըստ տեխնիկական պայմանների**  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (\*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրը

\_\_\_\_\_ **չկան**  
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

\_\_\_\_\_ **չկան**

12.6. աղբահանություն

\_\_\_\_\_ **Պտղական գյուղի աղբավայր**

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

\_\_\_\_\_ **Համաձայն աշխատանքային նախագծի**  
(ոեյիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

\_\_\_\_\_ **Ողջ պարագծով նախատեսել 1,5 մ ոչ պակաս բարձրությամբ աշակերտների ազատ ելքը փողոցի բակուկ հատված արգելափակող**

**ցանկապատ:** Տարածքը բարեկարգել, լուսավորել, հիմնական  
անցումներն ու մոտեցումները սալադրել:  
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները,  
կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր,  
ցանկապատում, գուլագոյ և այլն)

15. Շինարարական նյութեր  
Շինարարական ստանդարտներին համապատասխան շինարարական  
նյութեր՝ շրջակայքին և կառուցված նոր մասնաշենքին  
համապատասխան  
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ  
առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ  
համաձայն գործող նորմերի  
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների  
պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ  
ապահովել հակահրդեհային նորմատիվ  
պահանջները  
(հակահրդեհային անվտանգության ապահովման  
միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության  
սակավաշարժ խմբերի պաշտպանության  
միջոցառումներ  
ՀՀԸՆ, IV-11.07.01-2006 ( ՄԱՆ 3.02-05-2003)  
շինարարական նորմերին համապատասխան

19. Շրջակա միջավայրի պահպանում  
ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև  
աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և  
այլ տեխնածին ծագման գործոններին N 2.1.7.003, N 2.1-010  
սանիտարական կանոններով և նորմերով, ՀՀԸՆ 22-04 շինարարական  
նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները  
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից  
բացառելու միջոցառումները)

20. Շինարարության  
կազմակերպում  
սահմանազատել շին, հրապարակը, նախատեսել շինարարության  
կազմակերպման և անվտանգության միջոցառումների սխեմա, շինարարական  
հրապարակների ցանկապատումը կառավորել համապատասխան  
ճանապարհային նշաններով՝ ապահովելով օրվա մուգ ճամբերին ու  
անբավարարա տեսանելիության պայմաններում լրացուցիչ ազդանշանային  
լուսավորումը, աշխատանքների իրականացման օրացույցային գրաֆիկ  
(առաջարկություններ շինարարության հետ կապված  
անբարենպաստ ազդեցության բացառման, ըստ շրջային  
տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի  
ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը  
և նախագծի մշակման փուլերը  
24 ամիս  
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և  
նախագծի մշակման փուլերը)

#### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի  
փորձաքննությանը ներկայացվող  
պահանջներ

պետական համալիր փորձաքննություն  
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ  
սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի)

երաշխավորագիրը  
հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

**Պատվիրատուի (Հայաստանի տարածքային զարգացման  
հիմնադրամ) հետ:**

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ  
նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային  
նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի  
փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով  
նախատեսված դեպքում)

24. Հասարակական  
քննարկումներ

սահմանված կարգով

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված  
դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ  
մասնագիտական  
եզրակացությունների ստացում

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային  
անվտանգության տեսչական մարմնի, ՀՀ ստորջապահության և  
աշխատանքի տեսչական մարմնի, Համայնքի ղեկավարի հետ և այլ  
շահագրգիռ կողմերի հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված  
պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ  
լիազորված մարմինների հետ,

ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում  
ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային  
պահարանների տեղադրում

սահմանված կարգով

27. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՐՅԵՄԲԻՆԻՍՏՐԱԿՏԻ ՎԱՍՏՆՔԻ

ՂԵՎԱՎԱՐ

(ստորագրությունը, անունը, ֆունկցիան)

ԱՐԱՔԱՐՅԱՆ



Կ. Տ.



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «5» թվականի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատչելի կատարված (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը ինտեյալ սվյակներով):

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԱԾ)

ՀՀ ՏԱԿՈՒԾԻ ՍԱՐԺԻ «ԴՏՆԱԿԱՆ ՄՈՋԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈՒԿ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆԱԿՆԵՐ ԿՎԱՅԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Մանգ Տանդո, համայնք Վյուսի գյուղ Պարթևան

### 3. ԳՐԱՆՑՈՒՆ ՀԱՄԱՐ ՀԵՍԵ ՀԱՆՐԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՎՈՐՈՒԹՅԱՆ

Ոչ բնակչի տարածքի մտադրուց օգտագործման պայմանագիր սեր. թիվ 15431, 29.11.2017թ.

### 4. ՀՈՐԱՄԱՍԻՐ ԲՆԱԹՅԱԳՐԵԸԸ

Կադաստրային ծածկի թիվը՝ 11-055-0002-0001

Մանրերն չափը (մա)

Նստատեղաբն նշանակության ո՞ր բնակավայրերի

Գոտտանանան նշանակությանը նախատեսված Հայաստանի Հանրապետության վարչապետի հրամանագրով

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՇԱՐԺԻՑ ԹՅԱԳՈՐԾՈՒՄ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Եպատակային կշանակությունը՝ Հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/ի	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	11-055-0002-0001-001-000	Դպրոց	2715.22 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	11-055-0002-0001-002-000	Կարսայտու ն	114 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
3	11-055-0002-0001-003-000	Ենթակայան	25.84 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

*Լրացուցիչ կշումներ և տեղեկություններ*

Պայմանագրի գործողության ժամկետը՝ անժամկետ:

Գրանցումը իրավունքների առարկայապես սահմանված շահագրգռումը՝ Սարիսե Մատինյան գյուղից բնակավայրում՝ Երևանի տարածքային կառուցման մասին անշարժ գույքի մեզիստր


14.3

ԱՐՄԱՍՏՐ ԿԱՌԱՍՏՐ ESTATE CADASTRE





**Տավուշի մարզ**  
**Պտղավան համայնք**  
**Հատված կադաստրային քարտեզից**  
**Կադաստրային ծածկագիր՝ 11-055-0002-0001**  
**Մասշտաբ 1: 1500**



	Կոորդինատներ				
	X	Y		X	Y
1	8487619.1453	4566552.9183	17	8487718.1563	4566647.4134
2	8487624.2811	4566549.4121	18	8487708.3543	4566647.4134
3	8487624.1305	4566548.8601	19	8487707.0785	4566645.7875
4	8487693.9480	4566519.8353	20	8487705.4728	4566643.3396
5	8487694.2263	4566518.6907	21	8487700.4091	4566635.8862
6	8487694.2137	4566518.0396	22	8487698.6122	4566633.2263
7	8487693.9460	4566517.6612	23	8487696.9751	4566629.0704
8	8487686.9453	4566508.6205	24	8487691.4146	4566615.3637
9	8487713.4703	4566493.9495	25	8487686.4111	4566607.4557
10	8487715.4955	4566491.8426	26	8487685.2470	4566606.1164
11	8487746.5432	4566479.1583	27	8487652.1053	4566606.2613
12	8487753.8601	4566503.7042	28	8487648.1363	4566606.0811
13	8487783.6860	4566601.4860	29	8487648.0702	4566602.8775
14	8487789.7439	4566620.7129	30	8487633.2001	4566592.6027
15	8487773.8335	4566629.1307	31	8487619.3975	4566558.0967
16	8487752.5892	4566655.6765			

սպասարկման գրասենյակ

Կ.Տ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ  
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**


Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, ՀճՈ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mra.gov.am

N Ե-01/2368  
13 սեպտեմբեր 2024թ.

**«ԳԼՈՐԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ  
ՏՆՕՐԵՆ Լ. ԶԱՏԻԿՅԱՆԻՆ**

Հարգելի Լ. Զատիկյան,

Ի պատասխան Ձեր գրության հայտնում ենք, որ ավելցուկային գրունտների և թափոնակույտերի հեռավորությունը բնակավայրից կազմում է մոտ 7,5 կմ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ  ԱՐՄԻՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ

Կար. Առաջին կարգի մասնագետի փոխադրվող՝ Օ. Գուգանյան

Google



Изображения © CNES / Airbus, Maxar Technologies, 2024 Картографические данные © 2024 20 м

750681 - Имя заказчика  
 755682 - Адрес заказчика  
 755683 - Адрес заказчика

Համակարգ	Ջրամատակարարում*	Ջրահեռացում	Ռոոզում
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	3-րդ փողոց տարածքից 45մ	3-րդ փողոց տարածքից 100մ	
Գործող խողովակի տրամագիծը, տեսակը ճնշումը	Սևող խողովակը 90մմ Միացված խողովակը 1x32մմ /ճնշ.1-3/պոլիէթիլենային	120մմ	
Միացման կետը	15մ	100մ	
Միացման տրամագիծը	1x32մմ		
Կառուցվող խողովակի երկարությունը և տրամագիծը	Երկարությունը 15մ Տրամագիծը 32մմ	Երկարությունը 100մ Տրամագիծը 120մմ	
Ջրի մուտքը ցանց լ/վրկ	1,0լ/վրկ	2,0լ/վրկ	
Այլ պահանջներ	Բավարար ճնշում ապահովելու համար անհրաժեշտ է ջրամղիչի տեղադրում և ջրակուտակիչ բաք	Անհրաժեշտ է կառուցել բիոմաքրման կետ ըստ նորմատիվային պահանջների	Ռոոզման համակարգի 120մմ պոլիէթիլենային խողովակաշարից հեռավորությունը 80մ մայր ջրագծից
Ջրամատակարարման գրաֆիկը	Օր 24ժ		

\*\*Արտաքին հիդրանտի առկայությունը- Արտաքին հիդրանտ առկա չէ, ենթակա է տեղադրման:

Պատասխանատու՝ Կարեն Բաբայանի զարգացման և ներդրումների հիմնադրամի

տնօրեն՝ Կարեն Բաբայանի Կարեն Հովհաննեսյան



10.09.2024թ